

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/5**

**27 դեկտեմբերի 2013 թ.**

Քննարկվեց «Ռ.Օ.Ս. ՕՅԼ» ՍՊԸ 04.12.2013 թ-ի վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ 20.11.2013 թ-ի թիվ 1108527 ստուգման ակտի դեմ:

**«Ռ.Օ.Ս. ՕՅԼ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.**

Սույն թվականի նոյեմբերի 22-ին փոստային ծառայության միջոցով ստացել ենք ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունի ՀՏ աշխատակիցների կողմից 20.11.2013թ.-ին կազմված թիվ 1108527 ակտը: Համաձայն նշված ակտի՝ այն կազմվել է հիմք ընդունելով ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունի ՀՏ աշխատակիցների կողմից 28.10.2013 թ.-ին կազմված թիվ 2217440 արձանագրությունը, որով արձանագրվել է ընկերության կողմից ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների իբր խախտման փաստ: Արդյունքում ընկերությանն է առաջադրվել տուգանք 150.000 դրամի չափով:

Կազմված արձանագրությունները ոչ միայն չեն համապատասխանում իրականությանը, այլ նաև կազմվել են օրենքի խախտմամբ: Մասնավորապես, փոստային ծրարում առկա հանձնարարագրում որպես հսկիչ գնում իրականացնելու համար հիմք վկայակոչված է միայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը: Մինչդեռ, այդ նույն օրենքը հստակ և առավել կոնկրետացված սահմանում է հսկիչ գնում իրականացնելու համար սպառիչ հիմքեր, որոնք սահմանված են նշված օրենքի հավելված 2-ի 1.3 կետով:

Վերը նշված հավելված 2-ի 1.3 կետով սահմանված հիմքերից ոչ մեկը հանձնարարագրում չնախատեսելով ուղղակիորեն խախտվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.4 կետի պահանջը, ըստ որի հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը:

Պետք է նշել նաև, որ 28.10.2013թ. ժամը 12:30-ին ընկերությանը պատկանող առևտրի կետից 6000 դրամ արժողությամբ որևէ գնում չի կատարվել, իսկ հակառակը փաստող որևէ վերաբերելի ապացույց առկա ուղարկված ծրարում առկա չէ:

Փաստորեն վարչական մարմինը, առանց որևէ ապացույցի նման փաստ հաստատված համարելով, խախտել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով սահմանված դրույթը, որի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում վարչական մարմինը գտել է, որ ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ.-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները:

Ակնհայտ է նաև, թե ինչ տրամաբանությամբ է կազմվել թվով 2 հատ արձանագրություն, այն դեպքում, երբ նշված օրենքի հավելված 2-ը նախատեսում է միայն մեկ արձանագրության կազմում երկու օրինակից, որոնք արձանագրության կազմման օրը ներկայացվում են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին /ինչը չի կատարվել/: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն արձանագրության մեկ օրինակի վրա կատարում է գրառում և ստորագրում

արձանագրությունը ստանալու մասին, այն հանձնում է հարկային մարմնի պաշտոնատար անձին:

Փաստորեն, եթե նույնիսկ իրականում կատարված լիներ հսկիչ գնում /ի դեպ պետք ապացուցվեր նաև, որ հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրները ձեռք են բերվել ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով/, ապա միևնույնն է, կազմված արձանագրությունը որևէ բացասական հետևանքներ չի կարող առաջացնել ընկերության համար, քանի որ թե հսկիչ գնումը, թե արձանագրությունների կազմումն իրականացվել է օրենքի խախտմամբ: Հետևաբար, նշված արձանագրությունների հիմքով կազմված ակտը նույնպես չի կարող համարվել օրենքի պահանջներին համապատասխան կազմված Ակտ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63 հոդվածի դրույթներով ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 20.11.2013 թ-ի թիվ 1108527 ակտը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգադարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգադարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բոլորը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նախ նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 07.10.2013թ. թիվ 2217440 հանձնարարագրի համաձայն «Ռ.Օ.Ս. ՕՅԼ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Հսկիչ գնման արդյունքում 28.10.2013 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2217440 արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն), որով արձանագրվել է ընկերության կողմից ՀՀ Կառավարության 26.08.04 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջների խախտման փաստ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից հրապարակվել է 07.11.2013 թ-ի թիվ 1108527 հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում կազմվել է 20.11.2013 թ-ի թիվ 1108527 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Ստուգման ակտով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Բողոքում բերված այն պնդման վերաբերյալ, որ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.3-դ կետով սահմանված հսկիչ գնում իրականացնելու համար սահմանված հիմքերից ոչ մեկը Հանձնարարագրում չնախատեսելով խախտվել է հավելված 2-ի 1.4-դ կետի պահանջը, նշվեց, որ այն հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.4-րդ կետի համաձայն. «Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, ...»:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 07.10.2013թ. թիվ 2217440 հանձնարարագրում նշված է հսկիչ գնում կատարելու հիմքը, այն է՝ «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը: Մասնավորապես, քննարկման ընթացքում ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձինք նշվեցին, որ ընկերությունում հսկիչ գնում կատարելու համար հիմք է հանդիսացել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի թիվ 2 հավելվածի 1.3-րդ կետի գ) ենթակետի դրույթը, այն է՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ համապատասխան պաշտոնատար

անձի հիմնավորված միջնորդությունը՝ հսկիչ գնում կատարելու թույլտվություն ստանալու համար: Վերջինս և հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի կողմից թիվ 2217440 հանձնարարագիրը հրապարակելու համար:

Բողոքում բերված այն պնդման վերաբերյալ, որ 28.10.2013 թ-ին ժամը 12:30-ին ընկերությանը պատկանող առևտրի կետից 6000 դրամ արժողությամբ որևէ գնում չի կատարվել և հակառակը փաստող որևէ վերաբերելի ապացույց առկա չէ, նշվեց հետևյալը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ գլխավոր հարկային տեսուչ Արամ Ազարյանը պնդեց, որ 28.10.2013 թ-ին ժամը 12:30-ին ք.Երևան, Դ.Բելի «Ընտանեկան» ռեստորանի հարևանությամբ գործող «Ռ.Օ.Ս. ՕՅԼ» ՍՊԸ-ին պատկանող վառելիքի մանրածախ առևտրի կետից կատարել է հսկիչ գնում, այն է՝ ձեռք է բերվել 12 լիտր «պրեմիում» տեսակի բենզին (1 լիտրը 500 դրամ), որի դիմաց կանխիկ վճարված 6000 դրամը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այնուհետև ժամը 12:32-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն, որի համաձայն հասույթը կազմել է 15000 դրամ: Ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձանց պահանջով չմուտքագրված գումարը՝ 6000 դրամը, ժամը 12:34-ին մուտքագրվել է ՀԴՄ և ժամը 12:34-ին նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը 6000 դրամ ընդհանուր գումարով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ուսումնասիրությամբ հիմնավորվել է ընկերության կողմից ՀՀ Կառավարության 26.08.04 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտված լինելու փաստը, որի համար և կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցը:

Հանձնաժողովի 20.12.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը սովել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ